ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-19/05 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«24» «05» 2019թ.**

ժ 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԲԱ/
ՎալերՀոդաբաշլան/ԳԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բադեյան/ՄՀՄ/

1. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով՝

- <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի, <<ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի և <<Աննա Սահակյան>> ԱՁ-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ներկայացրած հայտարարությունը (եզրակացություն) և հրավերով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և ապրանքի տեխնիկական բնութագրերը՝
- N 8-րդ, 9-րդ և 12-րդ չափաբաժիններով՝ <<ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
- N 11-րդ և 17-րդ չափաբաժիններով՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
- N 18-րդ չափաբաժնով՝ <<Աննա Սահակյան>> ԱՁ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 29.05.2019թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

_____ Ա. Զոհրաբյան

_____ Գ. Խաչատրյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան